

## ՄՐՅՈՒՅԹ

### ՀՀ Արմավիրի մարզի

«Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի  
«Տեխնոլոգիա», «Պատմություն» և «Ինֆորմատիկա» առարկաների  
ուսուցիչների թափուր հաստիքի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:  
Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:  
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և  
յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
- Անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- Ինքնակենսագրություն (Ձև 5)
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 6-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 20-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի «Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ գ. Ապագա, Վաղարշապատի խճ. 2:

Տեղեկությունների համար զանգահարել 093-45-35-97  
հեռախոսահամարով: